

## ՊԱՏԻԺ ԴԱՅՄԱՆԱԿԱՆՈՐԵՆ ԶԿԻՐԱՌԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

### Լիանա Եղիզարյան

*ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի դասախոս*

Պատժին վերաբերող հարցերն արդարադատության իրականացման ամենապատասխանատու և բարդ խնդիրներից է: Դրանց մասին օրենսդրական կարգավորումները թույլ են տալիս պատժի նշանակման, ազատման և կատարման ոլորտում պետության վարած քրեական քաղաքականության, այդ թվում դրա հիմնական նպատակների վերաբերյալ ճիշտ պատկերացում կազմել:

Պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտի էության բացահայտման, վերջինի ճիշտ կիրառման, հետևաբար նաև արդյունավետության բարձրացման համար կարևոր են դրա կիրառման ընթացակարգի վերաբերյալ հստակ օրենսդրական կարգավորումների նախատեսումը և դրանք գործնականում ճիշտ ու միատեսակ կիրառելն ապահովելը: Նկատի ունենալով նշվածը՝ տվյալ աշխատանքում քննարկվելու են պատիժը պայմանականորեն չկիրառելու ընթացակարգին վերաբերող հարցեր:

ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե դատարանը, կալանքի, ազատագրվման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ նշանակելով, հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին:

Հետևաբար, ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ն մասի իմաստով՝ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին որոշում է կայացնում **դատարանը**: Քանի որ վարույթն իրականացնող մարմիններից միայն դատարանն ունի պատիժ նշանակելու լիազորություն, հետևաբար՝ պատիժը պայմանականորեն չկիրառելու որոշում կայացնելու իրավունք նույնպես ունի միայն դատարանը: Ընդ որում, պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը ոչ թե դատավարական առանձին որոշում է կայացնում, այլ դրա մասին նշում է մեղադրական դատավճռում: Նույն դրույթի իմաստով՝ դատարանը պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին որոշում է կայացնում միայն պատիժ նշանակելուց հետո:

Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածը, սահմանելով դատավճիռ կայացնելիս դատարանի լուծմանը ենթակա հարցերի շրջանակը, ամրագրում է.

«1. Դատավճիռ կայացնելիս դատարանը ներկայացված հաջորդականությամբ լուծում է հետևյալ հարցերը՝

(...)

7) ինչ պատիժ պետք է նշանակվի ամբաստանյալի նկատմամբ.

8) ամբաստանյալն արդյո՞ք պետք է կրի իր նկատմամբ նշանակված պատիժը»:

Վերոգրյալից երևում է, որ յուրաքանչյուր գործով դատավճիռ կայացնելիս դատարանը **պարտավոր** է անդրադառնալ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման հնարավորությանը: Այլ կերպ՝ դրական պատասխանելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածով նախատեսված հարցերին՝ դատարանը նշանակում է կոնկրետ պատժատեսակ և կոնկրետ պատժաչափ, որից

հետո լուծում է պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցը: Քննարկվող հարցի կապակցությամբ ՀՀ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատարանը, կայացնելով մեղադրական դատավճիռ, ամբաստանյալի նկատմամբ նշանակում է քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածում թվարկված պատժատեսակներից (կալանք, ազատազրկում, կարգապահական գումարտակում պահելը) որևէ մեկը՝ սահմանելով դրա չափը, այնուհետև համոզվելով, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց նշանակված պատիժը փաստացի կրելու, որոշում է դատապարտյալի վրա որոշակի պարտականություններ դնելով՝ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել<sup>1</sup>:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դատարանի դատավճիռը պետք է լինի պատճառաբանված: Պատճառաբանման ենթակա են դատարանի կողմից դատավճռում շարադրվող բոլոր հետևությունները և որոշումները:

Դատական ակտի պատճառաբանվածության չափանիշի առնչությամբ ՀՀ Վճռաբեկ դատարանն իր նախադեպային իրավունքում մշտապես ընդգծել է, որ դատական ակտերի պատճառաբանման պահանջը ոչ միայն արդարացիության կարևոր բաղադրատարր է, այլև անձի արդար դատաքննության իրավունքի արդյունավետ իրացման կարևոր երաշխիք, ինչը դատավարության մասնակիցներին պաշտպանում է կամայականություններից:

Դատական ակտի պատճառաբանվածությունը կոչված է պարզաբանելու, թե ինչու է դատարանը հանգել այս կամ այն հետևության, որ իրավանորմերով է ղեկավարվել նման որոշում կայացնելիս և միևնույն ժամանակ հնարավորություն է ստեղծում վերադաս դատարանի կողմից դատական ակտի օրինականության և հիմնավորվածության ստուգման համար: Քրեական դատավարության ցանկացած փուլում դատարանի կողմից չհիմնավորված, չպատճառաբանված (կամ ոչ պատշաճ պատճառաբանված) որոշումների կայացումն անընդունելի է<sup>2</sup>:

ՀՀ Վճռաբեկ դատարանը 2010 թվականի մարտի 26-ի ԵԿԴ/0058/11/09 որոշմամբ իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ հանցագործության կատարման մեջ մեղավոր ճանաչված անձի նկատմամբ պատիժ նշանակելիս դատարանը պարտավոր է գործի նյութերում առկա փաստական տվյալների հիման վրա պատճառաբանել ինչպես պատժի տեսակի և չափի ընտրության, այնպես էլ ազատությունից զրկելու հետ կապված պատիժը կրելու անհրաժեշտության վերաբերյալ իր որոշումը: Դատական որոշման որակը մեծապես կախված է դրա պատճառաբանական մասից, հետևաբար դատական որոշումներն սկզբունքորեն պետք է պատճառաբանված լինեն: Պատժի տեսակի և չափի ընտրության, ինչպես նաև պատիժը կրելու անհրաժեշտության վերաբերյալ դատարանի եզրահանգումները հիմնավորող պատճառների մատնանշումը ոչ միայն ավելի հասկանալի և ընդունելի է դարձնում դատավճիռը վարույթի մասնակիցների համար, այլև բացառում է կամայականությունը: Դա նախևառաջ նշանակում է, որ դատարանը պարտավորված է լինում արձագանքել կողմերի ներկայացրած փաստարկներին և մատնանշել տվյալ որոշումը հիմնավորող և իրավաչափ դարձնող փաստարկները: Երկրորդ՝

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Հովհաննես Արտաշեսի Սահակյանի գործով 2009 թվականի հունիսի 2-ի ԵԲԴ/0571/01/08 որոշումը:

<sup>2</sup> Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Ֆրունզիկ Գալստյանի գործով 2010 թվականի մարտի 26-ի թիվ ԵԿԴ/0058/11/09, Գևորգ Խնուսյանի գործով 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԵԵԴ/0030/01/12, Արսեն Մակարյանի գործով 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԿԴ/0016/11/15, Արամայիս Հակոբյանի գործով 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ԵԿԴ/0224/01/14, Մարտուն Հակոբյանի գործով 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ ԱՐԴ/1/0005/11/16, Արարատ Սարգսյանի գործով 2019 թվականի հունիսի 12-ի թիվ ԵԱԴԴ/0005/01/17 որոշումները:

պատշաճ պատճառաբանությունը հասարակությանը թույլ է տալիս հասկանալ, թե ինչպես է գործում դատական համակարգը հանցանք կատարած անձի նկատմամբ պատիժ սահմանելիս: Բացի այդ, դատական ակտի չպատճառաբանված կամ ոչ բավարար չափով պատճառաբանված լինելը հանգեցնում է նաև քրեական դատավարության կարևորագույն սկզբունքներից մեկի՝ արդար դատական քննության իրավունքի խախտման, քանի որ օբյեկտիվորեն սահմանափակվում է վերադաս դատական ատյանի հնարավորությունը՝ լիարժեք դատական ստուգման ենթարկելու բողոքարկվող դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը<sup>1</sup>:

«Հ Վճռաբեկ դատարանը 2014 թվականի հոկտեմբերի 31-ի ԵԿԴ/0252/01/13 որոշմամբ եզրահանգել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջները պահպանված չլինելու առումով ընդունելի չի կարող համարվել ոչ միայն այն դատական ակտը, որտեղ պատժի վերաբերյալ դատարանի հետևությունները հիմնված չեն դատական քննության ժամանակ հետազոտված ապացույցների վրա, այլև այնպիսին, որում բացակայում են պատժատեսակի, պատժաչափի կամ պատիժը կրելու նպատակահարմարության վերաբերյալ դատարանի եզրահանգումները հիմնավորող հետևողական, հստակ և ոչ հակասական պատճառաբանությունները<sup>2</sup>:

Չնայած վերոգրյալին՝ հարկ է նշել, որ պրակտիկայում այնուամենայնիվ դեռ հանդիպում են դեպքեր, երբ դատարանները դատավճիռ կայացնելիս ընդհանրապես չեն անդրադառնում նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցին: Ավելին՝ որոշ դեպքերում առանց որևէ պատճառաբանության դատարաններն ընդամենը նշում են, որ ամբաստանյալը պետք է կրի նշանակված պատիժը<sup>3</sup>:

Տեսության մեջ քննարկվում է նաև այն հարցը, թե պատիժը պայմանականորեն չկիրառելը դատարանի իրավունքն է, թե՞ պարտականությունը: «ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «(...) դատարանը (...) կարող է որոշում կայացնել (...) պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին»: Մեջբերված ձևակերպումից բխում է, որ օրենսդիրը պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցը թողնում է դատարանի հայեցողությանը: Ընդ որում՝ ՀՀ քրեական նոր օրենսգրքի 84-րդ հոդվածի 1-ին մասն այս առումով համընկնում է գործող քրեական օրենսգրքի կարգավորումներին և կրկին տալիս է «կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին» ձևակերպումը:

Հարկ է նկատել, որ պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտին վերաբերող մի շարք հարցեր ՀՀ քրեական օրենսգրքում հստակ սահմանված չեն, և հիմնականում այս ինստիտուտի կիրառումը գտնվում է դատարանի հայեցողության շրջանում: Մասնավորապես՝ պատիժը պայմանականորեն չկիրառելու որոշում կայացնելը դատարանի իրավունքն է, չկա որևէ սահմանափակում կատարած հանցանքի ծանրության աստիճանի, նշանակված պատժաչափի հետ կապված, այն կարող է կիրառվել նախկինում դատապարտված, այդ թվում նաև ռեցիդիվ ունեցող անձանց նկատմամբ, փորձաշրջան սահմանելիս դատարանն է սեփական հայեցողությամբ որոշում դրա չափը, դրա ընթացքում պարտականություններ դնելու կամ չդնելու անհրաժեշտության, ինչպես նաև դրանց տեսակի որոշման հարցը:

Չնայած այս ինստիտուտի կիրառության հարցի քննարկումը դատարանի պարտականությունն է, այնուամենայնիվ ինստիտուտի կիրառությունը չի համար-

<sup>1</sup> Տե՛ս Ֆրունզիկ Գալստյանի գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 2010 թվականի մարտի 26-ի ԵԿԴ/0058/11/09 որոշման 18-19-րդ կետերը:

<sup>2</sup> Տե՛ս Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի գործով Վճռաբեկ դատարանի 2014 թվականի հոկտեմբերի 31-ի ԵԿԴ/0252/01/13 որոշման 40-րդ կետը:

<sup>3</sup> Տե՛ս, օրինակ թիվ ԵԴ/0975/01/20 քրեական գործով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասությանի դատարանի 2021 թվականի փետրվարի 8-ի դատավճիռը:

վում դատարանի պարտականություն և գտնվում է դատարանի հայեցողության շրջանակներում:

Իրավաբանական գրականության մեջ իրավացիորեն նշվում է, որ չպետք է հավասարության նշան դնել նաև «ազատություն» և «հայեցողություն» հասկացությունների միջև, քանի որ իրավակիրառողը իր հայեցողությամբ որոշում կայացնելիս սահմանափակված է որոշակի ոլորտով և այդ սահմանափակված ոլորտում ընտրության համար սահմանված լրացուցիչ պայմաններով: Բացի այդ, իրավակիրառողը պետք է առաջնորդվի օրենքի ընդհանուր սկզբունքներով, նպատակներով, հասարակության զարգացման ընդհանուր օրենքներով: Նման իրավիճակներում «հայեցողություն» հասկացությունը ձեռք է բերում պայմանական և սահմանափակ բնույթ<sup>1</sup>:

Քրեական իրավունքում դատական հայեցողությունը բնութագրվում է որպես դատավարական ձևով իրականացվող իրավակիրառ գործունեության տեսակ, որի ընթացքում քրեական իրավունքի նորմերով նախատեսված դեպքերում և սահմաններում դատարանի կամ իրավապահ այլ մարմինն իրացնում է օրենսդիրի կամքի, իրավունքի սկզբունքների, բարոյական նորմերի և կատարված հանցանքի կոնկրետ հանգամանքներին և օրինականության, հիմնավորվածության և արդարադատության պահանջներին համապատասխանող հնարավոր որոշումներից որևէ մեկի ընտրության իրավասությունը<sup>2</sup>:

Տեսական գրականության մեջ չկա դատական հայեցողության շրջանակների վերաբերյալ միասնական մոտեցում<sup>3</sup>: Կան հեղինակներ, ովքեր ընդունում են դատական հայեցողության առկայության փաստն ու դրա նշանակությունը, սակայն միևնույն ժամանակ ընդգծում են, որ այն պետք է հիմնված լինի ոչ թե դատարանի (դատավորի) անհատական նախապատվության, այլ օրենքով սահմանված չափանիշների վրա<sup>4</sup>:

Մեկ այլ մոտեցման համաձայն՝ դատական հայեցողությունը դատարանի կողմից իրականացվող հնարավոր իրավական լուծումների համեմատաբար ազատ ընտրություն է, որը սահմանափակված է իրավունքով (օրենքով) և դատարանի լիազորությունների սահմանով: Նշվածից հետևում է, որ կյանքի կոնկրետ իրավիճակի հետ կապված հնարավոր իրավական որոշման համեմատաբար ազատ ընտրությունը, որն իրականացվում է դատարանի կողմից, ոչ թե դատարանի բացարձակ անվերապահ հայեցողությունն է, այլ որոշակի սահմաններում ընտրությունը, որը իրավական գրականության մեջ կոչվում է դատական հայեցողության սահմաններ<sup>5</sup>:

Կ.Կոմիսարովի կարծիքով՝ դատական հայեցողությունը դատարանին ընձեռված հնարավորությունն է՝ կոնկրետ պայմաններից ելնելով, ընդունելու իրավունքի

<sup>1</sup> St`u **Рарог А. И., Грачева Ю. В.** Понятие, основание, признаки и значение судейского усмотрения в уголовном праве // "Государство и право", 2001, № 11, էջ 93:

<sup>2</sup> St`u **Грачева Ю.В.** Пределы усмотрения в условном осуждении. Пробелы в российском законодательстве, N 5`2016, էջ 22:

[https://www.urvak.ru/upload/issue\\_files/7594/%d0%9f%d0%a0\\_2016\\_05\\_01\\_03%20%d0%93%d1%80%d0%b0%d1%87%d0%b5%d0%b2%d0%b0.pdf](https://www.urvak.ru/upload/issue_files/7594/%d0%9f%d0%a0_2016_05_01_03%20%d0%93%d1%80%d0%b0%d1%87%d0%b5%d0%b2%d0%b0.pdf)

<sup>3</sup> St`u **Maria Iglesias Vila**, Judicial Discretion and Judicial Positivism. The substantive criteria of validity. [http://www.law.yale.edu/documents/pdf/Iglesias\\_Judicial\\_Discretion\\_and\\_Judicial\\_Positivism.pdf](http://www.law.yale.edu/documents/pdf/Iglesias_Judicial_Discretion_and_Judicial_Positivism.pdf). John Bilyeu Oakley, Taking Wright Seriously: Of judicial discretion, Jurisprudents and the Chief Justice. <http://hastingsconlawquarterly.org/archives/V4/14/oakley.pdf>

<sup>4</sup> St`u **R. Dworkin**, «Judicial Discretion», (1963) The Journal of Philosophy Vol. 60, No.

<sup>5</sup> St`u **Гитинова М.М.** // Проблема судейского усмотрения в уголовном праве при назначении уголовного наказания. Вестник воронежского государственного университета. серия: право. 1 (24), 2016, էջ 219:

վերաբերյալ այնպիսի որոշում, ինչի հնարավորությունը բխում է օրենքի ընդհանուր և հարաբերական որոշակի դրույթներից<sup>1</sup>:

Ա. Բարակի կարծիքով՝ դատական հայեցողությունը դատարանի իրավասությունն է ընտրել երկու կամ ավելի այլընտրանքներից մեկը, երբ այլընտրանքներից յուրաքանչյուրն էլ օրինական է<sup>2</sup>:

Ի.Մ.Ազգունովան նշում է, որ այն երկրում, որտեղ քրեական իրավունքի միակ աղբյուրը Քրեական օրենսգիրքն է, իսկ դատարանի դերը այն մեկնաբանելն ու կիրառելն է, քրեական օրենսդրությունը պետք է լինի հնարավորության դեպքում հստակ, իսկ դատարանի հայեցողության սահմանները՝ ոչ մեծ: Հեղինակի կարծիքով՝ հենց նշվածում դեպքում է իրագործվում օրինականության սկզբունքը, և Երաշխավորվում է իրավակիրառողի կամայականությունից գերծ մնալը<sup>3</sup>:

Թեև պատիժ նշանակելու և պատժից ազատելու գործընթացը, այդ թվում նաև պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում կարծում ենք՝ դժվար է պատկերացնել առանց դատարանի հայեցողության, այնուամենայնիվ իրավաբանական գրականության մեջ հիմնականում քննարկվում է այն հարցը, որ այս ինստիտուտի դեպքում օրենսդիրը դատարանին տվել է հայեցողության լայն շրջանակ, որը անհրաժեշտ է որոշակի սահմանափակումների ենթարկել<sup>4</sup>:

Անկասկած, արդարադատություն իրականացնելիս, մասնավորապես՝ պատիժ նշանակելու կամ պատժից ազատելու հարցերը լուծելիս դատարանի հայեցողությունը գոյություն ունի օբյեկտիվորեն, քանի որ օրենսդիրը չի կարող հստակ որոշել և կարգավորել պրակտիկայում հնարավոր հանդիպող բոլոր դեպքերը: Ավելին՝ հաշվի առնելով, որ դատարանը պատիժը նշանակում և պատժից ազատում է, առաջնորդվելով արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքներով, ուստի ակնհայտ է, որ այդ սկզբունքները կարող են ապահովվել, եթե դատարանն ունի հայեցողության որոշակի հնարավորություն: Սակայն նշված հնարավորությունը չպետք է մեկնաբանել որպես կամայականություն, քանի որ դատարանի հայացողությունը, կարծում ենք, թեև իրավունք և հնարավորություն է, սակայն որոշակի հիմքերի առկայության դեպքում այդպիսի իրավունքից օգտվելը վերածվում է դատարանի պարտականության:

Պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտի առումով կարծում ենք, որ յուրաքանչյուր դեպքում, երբ դատարանը հանգում է եզրակացության, որ պատժի նպատակների ապահովումը հնարավոր է առանց պատիժն անմիջականորեն կրելու, նա պարտավոր է պատիժը պայմանականորեն չկիրառել:

Ամփոփելով վերոգրյալը, հարկ է ընդգծել, որ թեև այս ինստիտուտի կիրառության հարցի քննարկումը դատարանի պարտականությունն է, այնուամենայնիվ ինստիտուտի կիրառությունը չի համարվում դատարանի պարտականություն: Այդուհանդերձ կարծում ենք, որ յուրաքանչյուր դեպքում, երբ դատարանը հանգում է եզրակացության, որ պատժի նպատակների ապահովումը հնարավոր է առանց պատիժն անմիջականորեն կրելու, նա պարտավոր է պատիժը պայմանականորեն չկիրառել:

<sup>1</sup> Տե՛ս **Комиссаров К. И.** Задачи судебного надзора в сфере гражданского судопроизводства. Свердловск, 1971, էջ 26:

<sup>2</sup> Տե՛ս **Барак А.** Судейское усмотрение / перевод с английского / А. Барак. – Москва: НОРМА, 1999. – էջ 13.

<sup>3</sup> Տե՛ս **Агзамов И. М.** Условное неприменение уголовного наказания как комплексный правовой институт: Дис. ... д-ра юрид. наук / И.М. Агзамов. – М., 2013. էջ 288

<sup>4</sup> Տե՛ս օրինակ՝ **Алексеев И. Н.** Условное осуждение в уголовном праве России: дис. ... к.ю.н. Саратов, 2004. էջ 66 // **Грачева Ю. В.** Пределы усмотрения в условном осуждении. Пробелы в российском законодательстве, N 5'2016, էջ 22  
[https://www.urvak.ru/upload/issue\\_files/7594/%d0%9f%d0%a0\\_2016\\_05\\_01\\_03%20%d0%93%d1%80%d0%b0%d1%87%d0%b5%d0%b2%d0%b0.pdf](https://www.urvak.ru/upload/issue_files/7594/%d0%9f%d0%a0_2016_05_01_03%20%d0%93%d1%80%d0%b0%d1%87%d0%b5%d0%b2%d0%b0.pdf)

Առաջարկում ենք ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի առաջին մասը ձևակերպել հետևյալ խմբագրությամբ. «Եթե դատարանը, (...) պատիժ նշանակելով, հանգում է հետևության, որ պատժի նպատակների ապահովումը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա **որոշում է կայացնում** այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին»:

Նշված ձևակերպումը տալու անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ դատարաններն ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատիժը կրելու նպատակահարմարության հարցը լուծելիս և այս ինստիտուտի կիրառման հիմքերի ու պայմանների առկայության դեպքում պետք է ոչ թե առաջնորդվեն այն կանխավարկածով, որ օգտվում են իրենց հայեցողության շրջանակներից և ազատ են դրանից օգտվելու կամ չօգտվելու հարցում, այլ, որ պատիժը պայմանականորեն չկիրառելն իրենց պարտականությունն է, եթե առկա են այն դատապարտյալի նկատմամբ նշանակելու հիմքերը:

Մեր կարծիքով, առանձին հետաքրքրություն է ներկայացնում նաև նշանակված պատիժները փոխարինելիս պատիժը պայմանականորեն չկիրառելու քննարկման հրավորության հարցի նախատեսումը՝ հատկապես հաշվի առնելով այն, որ դատական պրակտիկայում տրված մեկնաբանությունների համատեքստում դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո քրեական իրավունքով կարգավորվող որոշ իրավահարաբերությունների նկատմամբ տարածվում են դատավճիռ կայացնելիս առկա իրավակարգավորումները:

Մասնավորապես կարծում ենք, որ հարկ է անդրադարձնալ հանրային աշխատանքները, իսկ ՀՀ քրեական նոր օրենսգրքով՝ նաև մի շարք այլ պատժատեսակներ կատարելուց խուսափելու դեպքում նշանակված պատիժն ազատագրված պատիժ փոխարինելիս պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցը քննարկելու անհրաժեշտությանը:

ՀՀ քրեական գործող օրենսգրքի 54-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հանրային աշխատանքները կատարելուց չարամտորեն խուսափելու դեպքում հանրային աշխատանքների չկրած մասը դատարանը փոխարինում է կալանքով կամ որոշակի ժամկետով ազատագրվածամբ:

Համանման կարգավորում է առկա նաև ՀՀ քրեական նոր օրենսգրքով: Այսպես, տուգանք (ՀՀ քրեական նոր օրենսգրքի 59-րդ հոդվածի 11-րդ մաս), հանրային աշխատանքներ (ՀՀ քրեական նոր օրենսգրքի 60-րդ հոդվածի 7-րդ մաս), որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը (ՀՀ քրեական նոր օրենսգրքի 61-րդ հոդվածի 7-րդ մաս), ազատության սահմանափակում (ՀՀ քրեական նոր օրենսգրքի 64-րդ հոդվածի 6-րդ մաս) պատժատեսակներից խուսափելու դեպքում դատարանը նշված պատժատեսակները կարող է փոխարինել ազատագրվածամբ:

ՀՀ Վճռաբեկ դատարանը կայուն նախադեպային իրավունք է ձևավորել առ այն, որ դատարանի այն որոշումը, որտեղ քննարկվում և լուծում են ստանում դատավճիռն վերաբերող այնպիսի հարցեր, ինչպես օրինակ՝ պատժատեսակի և պատժաչափի որոշումը, ևս գործն ըստ էության լուծող դատական ակտ է<sup>1</sup>:

Մեկ այլ որոշմամբ ՀՀ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հանրային աշխատանքները տուգանքով փոխարինելու մասին դատապարտյալի (պաշտպանի) միջնորդությունը քննարկելիս դատարանն անդրադարձնում է ՀՀ քրեական դատա-

<sup>1</sup> Տե՛ս Արսեն Արծրունու գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ՎԲ-16/11 որոշման 11-րդ կետը, Գարեգին Ղազարյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ ԱՐԱԴ/0017/13/12 որոշման 11.1-րդ կետը, Արթուր Ավետիսյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 15-ի թիվ ԼԴ/0125/13/17 որոշման 13-րդ կետը, Արսեն Արծրունու գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ՎԲ-16/11 որոշման 11-րդ կետը:

վարության օրենսգրքի 360-րդ հոդվածով նախատեսված այնպիսի իրավական հարցերի (պատժատեսակի և պատժաչափի որոշում), որոնք օրենքի ուժով (ex lege) վերապահված են գործն ըստ էության լուծող դատական ակտի՝ դատավճռի լուծմանը, հետևաբար նշված միջնորդության քննարկման արդյունքում կայացվող դատական ակտը պետք է բողոքարկվի, և բողոքը քննության առնվի այն նույն դատավարական ընթացակարգով, ինչը նախատեսված է գործն ըստ էության լուծող դատական ակտի համար<sup>1</sup>:

Նույն տրամաբանությամբ ՀՀ Վճռաբեկ դատարանն այլ գործով արձանագրել է, որ ազատագրվումը (կամ դրա չկրած մասը) հանրային աշխատանքներով փոխարինելու միջնորդությունը քննարկելիս դատարանն անդրադառնում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածում նախատեսված այնպիսի իրավական հարցի (ի՞նչ պատիժ պետք է նշանակվի հանցավորի նկատմամբ), որն օրենքի ուժով (ex lege) վերապահված է գործն ըստ էության լուծող դատական ակտի՝ դատավճռի լուծմանը: Այսպես, նշված միջնորդությունը քննության առնելով՝ դատարանը կայացնում է որոշում, որտեղ լուծում են ստանում դատավճռին վերաբերող՝ մասնավորապես պատժատեսակին և պատժաչափին առնչվող հարցեր: Հետևաբար ազատագրվումը (կամ դրա չկրած մասը) հանրային աշխատանքներով փոխարինելու միջնորդության քննարկման արդյունքում կայացված դատական ակտը նույնպես գործն ըստ էության լուծող դատական ակտ է<sup>2</sup>:

Թեև մեջբերված որոշումներն ըստ էության վերաբերում են վերաքննիչ բողոքարկման և վերաքննիչ բողոքի քննության կարգին, այնուամենայնիվ վերոնշյալից հետևում է, որ պատժի փոխարինման կամ տարածանկետման հարցերը ՀՀ Վճռաբեկ դատարանը դիտարկում է որպես դատավճիռ կայացնելու փուլին վերաբերող հարցեր, ինչից էլ, կարծում ենք տրամաբանորեն հետևում է, որ եթե դատարանը դատապարտյալի նկատմամբ նշանակված պատիժը որոշում է փոխարինել ազատագրվմամբ, ապա պետք է քննարկի նաև ազատարկումը կրելու անհրաժեշտության, այսինքն՝ պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտը կիրառելու հարցը: Հակառակ դեպքում ստացվում է, որ եթե անձի նկատմամբ ի սկզբանե նշանակվում է ազատագրվման հետ կապված պատիժ, ապա վերջինն ավելի բարենպաստ իրավիճակում է հայտնվում, և դատարանին հնարավորություն է տրվում քննարկել դատապարտյալի կողմից պատիժը կրելու նպատակահարմարության հարցը, իսկ ազատությունից զրկելու հետ չկապված պատիժներն ազատագրվմամբ փոխարինելիս դատապարտյալը զրկվում է այդպիսի հնարավորությունից:

Նշված անհրաժեշտությունը հիմնավորվում է հատկապես այն պայմաններում, երբ ՀՀ քրեական նոր օրենսգրքով սահմանված՝ պատիժն ազատագրվմամբ փոխարինելու բոլոր դեպքերում դատարանը կարող է նշանակված պատիժները փոխարինել ազատագրվմամբ նույնիսկ այն դեպքում, երբ ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի սանկցիայով ազատագրվում նախատեսված չէ:

Արդյունքում ստացվում է մի իրավիճակ, երբ անձի նկատմամբ ըստ էության նշանակվում է ազատագրվում պատժատեսակը, սակայն չի քննարկվում այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցը, այսինքն՝ թե արդյոք դատապարտյալը պետք է կրի իր նկատմամբ նշանակված պատիժը:

Թեև ընդունելի է, որ, որպես կանոն, պատժից խուսափող անձին պատժի կրումից ազատելը կարող է լինել ոչ նպատակահարմար, այնուամենայնիվ կարծում ենք՝ անձի և նրա կատարած արարքի հանրային վտանագավորությունը, քրեական պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքներ

<sup>1</sup> Տե՛ս, mutatis mutandis, Էդիկ Ծոնվերանցի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի հունիսի 22-ի թիվ ԵՇԴ/0049/01/12 որոշումը:

<sup>2</sup> Տե՛ս Գաբրեգին Ղազարյանի գործով 2017 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ ԱՐԱԴ/0017/13/12 որոշման 11.1-րդ կետը:

րը, ինչպես նաև պատժից խուսափելու պատճառները և մի շարք այլ հանգամանքներ կարող են վկայել առանց ազատազրկում պատժատեսակը կրելու, փորձաշրջանի ընթացքում (այդ թվում՝ դատապարտյալի վրա պարտականություններ դնելով, լրացուցիչ պատիժ կամ անվտանգության միջոցներ նշանակելով) պատժի նպատակների ապահովման հավանականության մասին: Հետևաբար միանշանակ չէ, որ պատժից խուսափող անձն առանց ազատազրկման ձևով պատիժը կրելու չի կարող ուղղվել, և այդ դեպքում չեն կարող ապահովվել պատժի մյուս նպատակները:

*Վերոգրյալի հիման վրա առաջարկում ենք ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածում սահմանել՝ «Պատիժը պայմանականորեն չկատարելու հարցը դատարանը քննարկում է նաև, եթե որոշում է դատապաճռով նշանակված պատիժը փոխարինել ազատազրկամբ»:*

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում նաև այն հարցը, թե հանցագործությունների համակցությամբ պատիժ նշանակելու դեպքում դատարանը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման հարցը պետք է քննարկի նշանակված յուրաքանչյուր պատժի համար առանձին, թե վերջնական պատժի նկատմամբ:

Թեև նշված հարցի վերաբերյալ ՀՀ քրեական գործող օրենսգրքով որևէ կարգավորում առկա չէ, այնուամենայնիվ ՀՀ քրեական դատապարտության օրենսգրքի 360-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ և 8-րդ կետերից հետևում է, որ դատարանը, նախ, պետք է որոշի՝ ինչ պատիժ պետք է նշանակվի ամբաստանյալի նկատմամբ, այդ թվում՝ վերջնական, որից հետո քննարկի, թե ամբաստանյալն արդյոք պետք է կրի իր նկատմամբ նշանակված պատիժը: Այսինքն՝ դատարանը կարող է պատժի կրման նպատակահարմարության հարցին անդրադառնալ միայն վերջնական պատիժ նշանակելուց հետո:

Այնուամենայնիվ կարծում ենք՝ իրավակիրառողի համար ավելի հստակ կլինի, եթե քննարկվող հարցը ՀՀ քրեական օրենսգրքում կարգավորվի:

Հարկ է նշել, որ, ի տարբերություն գործող օրենսգրքի, ՀՀ քրեական նոր օրենսգրքի 84-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվում է, որ հանցագործությունների համակցության դեպքում պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցը որոշվում է համակցությամբ վերջնական պատիժը նշանակելուց հետո, որպիսի մոտեցումը մեզ համար ավելի ընդունելի է:

## CERTAIN QUESTIONS OF THE PROCEDURE OF CONDITIONAL PUNISHMENT

Liana Yedigaryan

Lecturer at the YSU Chair of Criminal Law

The subject of the article is the research of the issues related to the procedure of conditional punishment. The article discusses the issue of envisaging conditional punishment as a duty of the court. In addition, the article discusses the question of the expediency discussing the issue of conditional punishment when the punishment is replaced by imprisonment. The suggestions directed at improving the legislative regulation of the procedure of conditional punishment are presented by the author. Proposals on the improvement of the new criminal code of the Republic of Armenia were presented in the work.



## НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ УСЛОВНОГО НЕПРИМЕНЕНИЯ НАКАЗАНИЯ

Лиана Едигарян

*Преподаватель кафедры уголовного права ЕГУ*

---

В статье обсуждаются вопросы, связанные с условным неприменением наказания. Рассматривается вопрос об усмотрении условного неисполнение наказания как обязанности суда. Представлена целесообразность обсуждения вопроса об условном неприменении наказания при замене назначенного наказания на лишение свободы. В работе были представлены предложения по совершенствованию нового и действующего уголовных кодексов РА.

**Բանալի բառեր** – դատավճիռ կայացնելիս դատարանի կողմից լուծման ենթակա հարցեր, պատիժ նշանակել, պատիժը պայմանականորեն չկիրառելը, պատժի փոխարինում

**Ключеве слова:** вопросы, решаемые при вынесении приговора, назначение наказания, условное применение наказания, замена наказания.

**Key word:** Issues subject to resolution by court, when adopting the verdict, assignment of punishment, conditional punishment, replacement of the punishment